# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5

ք. Երևան «14» 03.2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մասթեր Սթայլ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության դասընթացների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **7,990,000 (Յոթ միլիոն ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ | <<Մաստեր Ստայլ>> ՍՊԸ |
| Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա | Ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք |
| Կոնվերսբանկ ԲԲԸ | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 1930059757870200 | Հ/Հ 163008180909 |
| ՀՎՀՀ 02562459 | ՀՎՀՀ 01571846 |
| Տնօրեն՝ Լ.Մնացականյան | Տնօրեն՝ Ա.Սարգսյան |
| Կ.Տ | Կ.Տ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |

*Հավելված N 1*
*« 14»     03. 2018թ. կնքված*
*ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը*** |
| 1 | 80500000 | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է նպաստել Հայաստանում նոր ձեռնարկությունների հիմնադրմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի ուսուցողական և մասնագիտական խորհրդատվության բաղադրիչը իրականացվում է CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանությամբ*:<br>Նպատակներն ու խնդիրներն են.<br>• ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացում,<br>• գործարար ունակությունների և հմտությունների զարգացում,<br>• նոր գաղափարների բացահայտում և իրականացման աջակցություն,<br>• նոր ստեղծվող ձեռնարկություններին համակողմանի աջակցության տրամադրում,<br>• ֆինանսական աջակցության հասանելիության | դրամ | 1598000 | 1 | ք. Աշտարակ | Մարտ-ապրիլ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապահովում:<br>Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու մասնագետ, որոնք պետք է ուղորդեն սկսնակ 15-20 գործարարներին մշակել իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն:<br>Կատարողի կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկվող մասնագետներից 2-ը պետք է ունենան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի անցկացման որակավորում կամ CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) դասընթացավարի որակավորում և առնվազն մեկը պետք է իրականացրած լինի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» առնվազն 3 (երեք) ծրագիր և/կամ ունենա բիզնես դասընթացավարի առնվազն 2 (երկու) «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրերի և/կամ գործարար ոլորտին առնչվող դասընթացների և խորհրդատվության իրականացման նմանատիպ փորձ:<br>Դասընթացների և անհատական խորհրդատվությունների ընթացքում սկսնակ գործարարները քայլ առ քայլ զարգացնում են իրենց գործարար գաղափարները՝ ստանալով հիմնարար գիտելիքներ և հմտություններ բիզնես պլանավորման, շուկայավարման, արտադրության կազմակերպման, կառավարման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական պլանավորման և այլ կարևոր հարցերի շուրջ: Միաժամանակ մասնակիցները ստանում են տեղեկատվություն և խորհրդատվություն հարկային դաշտի, հաշվապահության հիմունքների, պետական գրանցման ընթացակարգերի և ՀՀ օրենսդրության վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ: Արդյունքում սկսնակ գործարարներից յուրաքանչյուրը մշակում է իր անհատական գործարար ծրագիրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է պահանջել փոփոխել դասընթացների թեմաները և | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | նյութերը այնքան մինչև Կատարողի կողմից չկատարվի Պատվիրատու կողմից պահանջվող փոփոխությունները: Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը՝ Պատվիրատուի կողմից հաստատված, կազմել մինչև դասընթացի սկզբին նախորդող երկրորդ աշխատանքային օրը: Կատարողը պարտավոր է դասընթացները անցկացնել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում*: Դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացնում են իրենց գործարար ծրագրերը գնահատող հանձնաժողովին և հնարավորություն ստանում օգտվելու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսական աջակցությունից:<br><br>Կատարողի կողմից առաջարկվող մասնագետները պետք է դասընթացների ավարտին հաջորդող առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն հաշվապահական հաշվառման վարման ու հարկային հաշվետվությունների կազմման և այլ ուղղություններով: Կատարողը պարտավոր է ապահովել դասընթացների անցկացման վայրը, դասընթացների անցկացման ժամանակ ամեն օր մասնակիցների համար կազմակերպել սուրճի ընդմիջում, մասնակիցներին տրամադրել դասընթացների նյութերը, դասընթացների ժամանակ մասնակիցներն ապահովել գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով*: | | | | | |
| 2 | 80500000 | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է նպաստել Հայաստանում նոր ձեռնարկությունների հիմնադրմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի ուսուցողական և մասնագիտական խորհրդատվության բաղադրիչը իրականացվում է CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանությամբ*:<br><u>Նպատակներն ու խնդիրներն են.</u><br>• ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացում,<br>• գործարար ունակությունների և հմտությունների զարգացում, | դրամ | 1598000 | 1 | ք. Գյումրի | Մարտ-ապրիլ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • նոր գաղափարների բացահայտում և իրականացման աջակցություն,<br>• նոր ստեղծվող ձեռնարկություններին համակողմանի աջակցության տրամադրում,<br>• ֆինանսական աջակցության հասանելիության ապահովում:<br>Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու մասնագետ, որոնք պետք է ուղորդեն սկսնակ 15-20 գործարարներին մշակել իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն:<br>Կատարողի կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկվող մասնագետներից 2-ը պետք է ունենան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի անցկացման որակավորում կամ CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) դասընթացավարի որակավորում և առնվազն մեկը պետք է իրականացրած լինի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» առնվազն 3 (երեք) ծրագիր և/կամ ունենա բիզնես դասընթացավարի առնվազն 2 (երկու) «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրերի և/կամ գործարար ոլորտին առնչվող դասընթացների և խորհրդատվության իրականացման նմանատիպ փորձ:<br>Դասընթացների և անհատական խորհրդատվությունների ընթացքում սկսնակ գործարարները քայլ առ քայլ զարգացնում են իրենց գործարար գաղափարները՝ ստանալով հիմնարար գիտելիքներ և հմտություններ բիզնես պլանավորման, շուկայավարման, արտադրության կազմակերպման, կառավարման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական պլանավորման և այլ կարևոր հարցերի շուրջ: Միաժամանակ մասնակիցները ստանում են տեղեկատվություն և խորհրդատվություն հարկային դաշտի, հաշվապահության հիմունքների, պետական գրանցման ընթացակարգերի և ՀՀ օրենսդրության վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արդյունքում սկսնակ գործարարներից յուրաքանչյուրը մշակում է իր անհատական գործարար ծրագիրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է պահանջել փոփոխել դասընթացների թեմաները և նյութերը այնքան մինչև Կատարողի կողմից չկատարվի Պատվիրատու կողմից պահանջվող փոփոխությունները:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը՝ Պատվիրատուի կողմից հաստատված, կազմել մինչև դասընթացի սկզբին նախորդող երկրորդ աշխատանքային օրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացները անցկացնել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում*:<br>Դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացնում են իրենց գործարար ծրագրերը գնահատող հանձնաժողովին և հնարավորություն ստանում օգտվելու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսական աջակցությունից:<br><br>Կատարողի կողմից առաջարկվող մասնագետները պետք է դասընթացների ավարտին հաջորդող առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն հաշվապահական հաշվառման վարման ու հարկային հաշվետվությունների կազմման և այլ ուղղություններով:<br>Կատարողը պարտավոր է ապահովել դասընթացների անցկացման վայրը, դասընթացների անցկացման ժամանակ ամեն օր մասնակիցների համար կազմակերպել սուրճի ընդմիջում, մասնակիցներին տրամադրել դասընթացների նյութերը, դասընթացների ժամանակ մասնակիցներն ապահովել գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով*: | | | | | |
| 3 | 80500000 | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է նպաստել Հայաստանում նոր ձեռնարկությունների հիմնադրմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի ուսուցողական և մասնագիտական խորհրդատվության բաղադրիչը իրականացվում է CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանությամբ*: | դրամ | 1598000 | 1 | ք. Վայք | Մարտ-ապրիլ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նպատակներն ու խնդիրներն են.<br>• ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացում,<br>• գործարար ունակությունների և հմտությունների զարգացում,<br>• նոր գաղափարների բացահայտում և իրականացման աջակցություն,<br>• նոր ստեղծվող ձեռնարկություններին համակողմանի աջակցության տրամադրում,<br>• ֆինանսական աջակցության հասանելիության ապահովում:<br>Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու մասնագետ, որոնք պետք է ուղորդեն սկսնակ 15-20 գործարարներին մշակել իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն:<br>Կատարողի կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկվող մասնագետներից 2-ը պետք է ունենան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի անցկացման որակավորում կամ CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) դասընթացավարի որակավորում և առնվազն մեկը պետք է իրականացրած լինի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» առնվազն 3 (երեք) ծրագիր և/կամ ունենա բիզնես դասընթացավարի առնվազն 2 (երկու) «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրերի և/կամ գործարար ոլորտին առնչվող դասընթացների և խորհրդատվության իրականացման նմանատիպ փորձ:<br>Դասընթացների և անհատական խորհրդատվությունների ընթացքում սկսնակ գործարարները քայլ առ քայլ զարգացնում են իրենց գործարար գաղափարները՝ ստանալով հիմնարար գիտելիքներ և հմտություններ բիզնես պլանավորման, շուկայավարման, արտադրության կազմակերպման, կառավարման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պլանավորման և այլ կարևոր հարցերի շուրջ: Միաժամանակ մասնակիցները ստանում են տեղեկատվություն և խորհրդատվություն հարկային դաշտի, հաշվապահության հիմունքների, պետական գրանցման ընթացակարգերի և ՀՀ օրենսդրության վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ: Արդյունքում սկսնակ գործարարներից յուրաքանչյուրը մշակում է իր անհատական գործարար ծրագիրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է պահանջել փոփոխել դասընթացների թեմաները և նյութերը այնքան մինչև Կատարողի կողմից չկատարվի Պատվիրատու կողմից պահանջվող փոփոխությունները:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը՝ Պատվիրատուի կողմից հաստատված, կազմել մինչև դասընթացի սկզբին նախորդող երկրորդ աշխատանքային օրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացները անցկացնել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում*:<br>Դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացնում են իրենց գործարար ծրագրերը գնահատող հանձնաժողովին և հնարավորություն ստանում օգտվելու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսական աջակցությունից:<br><br>Կատարողի կողմից առաջարկվող մասնագետները պետք է դասընթացների ավարտին հաջորդող առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն հաշվապահական հաշվառման վարման ու հարկային հաշվետվությունների կազմման և այլ ուղղություններով:<br>Կատարողը պարտավոր է ապահովել դասընթացների անցկացման վայրը, դասընթացների անցկացման ժամանակ ամեն օր մասնակիցների համար կազմակերպել սուրճի ընդմիջում, մասնակիցներին տրամադրել դասընթացների նյութերը, դասընթացների ժամանակ մասնակիցներն ապահովել գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով*: | | | | | |
| 4 | 80500000 | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է նպաստել Հայաստանում նոր ձեռնարկությունների | դրամ | 1598000 | 1 | ք.Դիլիջան | Մարտ-ապրիլ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հիմնադրմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի ուսուցողական և մասնագիտական խորհրդատվության բաղադրիչը իրականացվում է CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանությամբ*:<br>Նպատակներն ու խնդիրներն են.<br>• ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացում,<br>• գործարար ունակությունների և հմտությունների զարգացում,<br>• նոր գաղափարների բացահայտում և իրականացման աջակցություն,<br>• նոր ստեղծվող ձեռնարկություններին համակողմանի աջակցության տրամադրում,<br>• ֆինանսական աջակցության հասանելիության ապահովում:<br>Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու մասնագետ, որոնք պետք է ուղորդեն սկսնակ 15-20 գործարարներին մշակել իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն:<br>Կատարողի կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկվող մասնագետներից 2-ը պետք է ունենան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի անցկացման որակավորում կամ CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) դասընթացավարի որակավորում և առնվազն մեկը պետք է իրականացրած լինի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» առնվազն 3 (երեք) ծրագիր և/կամ ունենա բիզնես դասընթացավարի առնվազն 2 (երկու) «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրերի և/կամ գործարար ոլորտին առնչվող դասընթացների և խորհրդատվության իրականացման նմանատիպ փորձ:<br>Դասընթացների և անհատական խորհրդատվությունների | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընթացքում սկսնակ գործարարները քայլ առ քայլ զարգացնում են իրենց գործարար գաղափարները՝ ստանալով հիմնարար գիտելիքներ և հմտություններ բիզնես պլանավորման, շուկայավարման, արտադրության կազմակերպման, կառավարման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական պլանավորման և այլ կարևոր հարցերի շուրջ: Միաժամանակ մասնակիցները ստանում են տեղեկատվություն և խորհրդատվություն հարկային դաշտի, հաշվապահության հիմունքների, պետական գրանցման ընթացակարգերի և ՀՀ օրենսդրության վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ: Արդյունքում սկսնակ գործարարներից յուրաքանչյուրը մշակում է իր անհատական գործարար ծրագիրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է պահանջել փոփոխել դասընթացների թեմաները և նյութերը այնքան մինչև Կատարողի կողմից չկատարվի Պատվիրատու կողմից պահանջվող փոփոխությունները:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը՝ Պատվիրատուի կողմից հաստատված, կազմել մինչև դասընթացի սկզբին նախորդող երկրորդ աշխատանքային օրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացները անցկացնել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում*:<br>Դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացնում են իրենց գործարար ծրագրերը գնահատող հանձնաժողովին և հնարավորություն ստանում օգտվելու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսական աջակցությունից:<br><br>Կատարողի կողմից առաջարկվող մասնագետները պետք է դասընթացների ավարտին հաջորդող առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն հաշվապահական հաշվառման վարման ու հարկային հաշվետվությունների կազմման և այլ ուղղություններով:<br>Կատարողը պարտավոր է ապահովել դասընթացների անցկացման վայրը, դասընթացների անցկացման ժամանակ ամեն օր մասնակիցների համար կազմակերպել սուրճի ընդմիջում, մասնակիցներին տրամադրել դասընթացների նյութերը, դասընթացների ժամանակ մասնակիցներն ապահովել | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով*: | | | | | |
| 5 | 80500000 | Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է նպաստել Հայաստանում նոր ձեռնարկությունների հիմնադրմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ծրագրի ուսուցողական և մասնագիտական խորհրդատվության բաղադրիչը իրականացվում է CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) մեթոդաբանությամբ*:<br>Նպատակներն ու խնդիրներն են.<br>• ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացում,<br>• գործարար ունակությունների և հմտությունների զարգացում,<br>• նոր գաղափարների բացահայտում և իրականացման աջակցություն,<br>• նոր ստեղծվող ձեռնարկություններին համակողմանի աջակցության տրամադրում,<br>• ֆինանսական աջակցության հասանելիության ապահովում:<br>Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու մասնագետ, որոնք պետք է ուղղորդեն սկսնակ 15-20 գործարարներին մշակել իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն:<br>Կատարողի կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկվող մասնագետներից 2-ը պետք է ունենան Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի անցկացման որակավորում կամ CEFE (Գիտելիքահեն տնտեսություն՝ ձեռնարկությունների կայացման ճանապարհով) դասընթացավարի որակավորում և առնվազն մեկը պետք է իրականացրած լինի Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» առնվազն 3 (երեք) ծրագիր և/կամ ունենա բիզնես դասընթացավարի | դրամ | 1598000 | 1 | ք. Չարենցավան | Մարտ-ապրիլ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | առնվազն 2 (երկու) «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրերի և/կամ գործարար ոլորտին առնչվող դասընթացների և խորհրդատվության իրականացման նմանատիպ փորձ:<br>Դասընթացների և անհատական խորհրդատվությունների ընթացքում սկսնակ գործարարները քայլ առ քայլ զարգացնում են իրենց գործարար գաղափարները՝ ստանալով հիմնարար գիտելիքներ և հմտություններ բիզնես պլանավորման, շուկայավարման, արտադրության կազմակերպման, կառավարման, ինքնարժեքի հաշվարկման, ֆինանսական պլանավորման և այլ կարևոր հարցերի շուրջ: Միաժամանակ մասնակիցները ստանում են տեղեկատվություն և խորհրդատվություն հարկային դաշտի, հաշվապահության հիմունքների, պետական գրանցման ընթացակարգերի և ՀՀ օրենսդրության վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ: Արդյունքում սկսնակ գործարարներից յուրաքանչյուրը մշակում է իր անհատական գործարար ծրագիրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է պահանջել փոփոխել դասընթացների թեմաները և նյութերը այնքան մինչև Կատարողի կողմից չկատարվի Պատվիրատու կողմից պահանջվող փոփոխությունները:<br>Կատարողը պարտավոր է դասընթացների թեմաները և նյութերը՝ Պատվիրատուի կողմից հաստատված, կազմել մինչև դասընթացի սկզբին նախորդող երկրորդ աշխատանքային օրը:<br>Կատարողը պարտավոր է դասընթացները անցկացնել 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում*:<br>Դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացնում են իրենց գործարար ծրագրերը գնահատող հանձնաժողովին և հնարավորություն ստանում օգտվելու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆինանսական աջակցությունից:<br><br>Կատարողի կողմից առաջարկվող մասնագետները պետք է դասընթացների ավարտին հաջորդող առնվազն երեք ամիսների ընթացքում ուղեկցեն սկսնակ գործարարներին՝ տրամադրելով խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն հաշվապահական հաշվառման վարման ու հարկային հաշվետվությունների կազմման և այլ ուղղություններով: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարողը պարտավոր է ապահովել դասընթացների անցկացման վայրը, դասընթացների անցկացման ժամանակ ամեն օր մասնակիցների համար կազմակերպել սուրճի ընդմիջում, մասնակիցներին տրամադրել դասընթացների նյութերը, դասընթացների ժամանակ մասնակիցներն ապահովել գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով*: | | | | | |

*Ծառայությունների մատուցումը իրականացվում է պայմանագրին կից ներկայացված ուղեցույցում նշված մեթոդաբանության և պայմաններին համաձայն:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան
Կ.Տ
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ
Ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն՝ Ա.Սարգսյան
Կ.Տ
/ստորագրություն/

*Հավելված N 2*
*« 14 »   03. 2018թ. կնքված*
*ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5  ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 80500000 | Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության դասընթաց CEFE մեթոդաբանությամբ (ք. Աշտարակ) | - | - | - | 1278400 | 1278400 | 1278400 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | **1598000** |
| 2 | 80500000 | Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության դասընթաց CEFE մեթոդաբանությամբ (ք. Գյումրի) | - | - | - | 1278400 | 1278400 | 1278400 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | **1598000** |
| 3 | 80500000 | Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության դասընթաց CEFE մեթոդաբանությամբ (ք. Վայք) | - | - | - | 1278400 | 1278400 | 1278400 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | **1598000** |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 80500000 | Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության դասընթաց CEFE մեթոդաբանությամբ (ք.Դիլիջան) | - | - | - | 1278400 | 1278400 | 1278400 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | **1598000** |
| 5 | 80500000 | Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության դասընթաց CEFE մեթոդաբանությամբ (ք. Չարենցավան) | - | - | - | 1278400 | 1278400 | 1278400 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | 1598000 | **1598000** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | - | - | - | **6392000** | **6392000** | **6392000** | **7990000** | **7990000** | **7990000** | **7990000** | **7990000** | **7990000** | **7990000** |

***Գումարները լրացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան
_________________ Կ.Տ
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ
Ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն՝ Ա.Սարգսյան
_________________ Կ.Տ
/ստորագրություն/

*Հավելված 3*
*« 14» 03.2018թ. կնքված*
*ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
<<Մասթեր սթայլ>> ՍՊԸ
Ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846

Պատվիրատու
Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՁԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 2018թ.
Պայմանագրի համարը՝ ***ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5***

*Պատվիրատուն՝ ի դեմս Հ.Միրզոյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս <<Մասթեր Սթայլ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Սարգսյանի հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____________________________
ստորագրություն
_____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____________________________
ստորագրություն
_____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 14» 03. 2018թ. կնքված*
*ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԾՁԲ-2018/5 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Մասթեր Սթայլ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018թ. ______________________ -ին կնքված N ________________________

պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

__________________________________
ազգանուն, անուն

__________________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

__________________________________
ազգանուն, անուն

__________________________________
ստորագրություն